

Ու 20-25,000 ընդունելով հայոց թիւը ԺԷ. դարու կէսերուն, պէտք է ընդունիլ որ նոյն դարու վերջերուն մօտ կիսով չափ պակսեցաւ այդ թիւը:

\* \* \*

Քիչ մը աւելի որոշ են ԺԸ. դարու թիւերը: Հայր Ղուկաս Ինճիճեան որ խմբագրած է Ստեփաննոս Ագոնցի «Աշխարհադրութիւն Զորից Մասանց Աշխարհի» II հատոր երկին թուրքիոյ մասին խօսող 3 հատորները, եւրոպական թուրքիան (1804, Վենետիկ) նկարագրած ատեն նկատի կ'առնէ ռումանական երկիրները եւս եւ այդ առթիւ տեղեկութիւններ կուտայ նաեւ հայոց մասին (էջ 218-225):

Հայր Ինճիճեան կ'ըսէ.

«Ձանաղան ազգք դտանին յերկոսին (Վալաքիա եւ Մոլտավիա) եւս, յորս եւ յազգէս հայոց բազմութիւն էին յառաջ ժամանակաւ, մինչեւ ի գլխաւոր քաղաքս իւրաքանչիւր դաւառաց նոցա՝ մանաւանդ Պուլտանի (Մոլտավիա) գրեթէ կիսով չափ էին հայք. այլ հետըզհետէ ցրուեալ ի Լեհ, ի Դրանսիլվանիա, նաեւ յայլ երկիրս օտմանեան, սակաւ մնացին այժմ»:

Հայ Ղուկաս Ինճիճեան հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ ԺԸ. դարու վերջը Մոլտավիայի եւ Պուլտինայի զանազան քաղաքներուն մէջ գտնուած հայոց թիւի մասին.—

Յօֆշան. «Բնակիչք նորա իրբեւ 6 կամ 7 հազար տունք. յորոյ իրբ 200 տունք են յազգէս հայոց»:

Պուֆրէշ. «Յառաջագոյն էին բազմութիւն» հայոց:

Եաշ. «Գտանին եւ յազգէս հայոց»:

Սուչովա. «Բնակիչք նորա են տունք առաւել քան զհազար, յորոյ իրբ 200 են յազգէս հայոց, գրեթէ առհասարակ վաճառականք»:

Թէֆուլ. «Բնակիչք նոր իրբ 1500 տուն, յորոյ իրբ 200 են յազգէս հայոց»:

Ռուման. «Բնակիչք նոր իրբ 1500 տունք, որոց կէսք էին յազգէս հայոց, այլ այժմ մնացին իրբ 50 տունք»:

Պօքօշան. «Յորում են տունք 500, յորս իրբ 200 են յազգէս հայոց»:

Կալաց. «Ի 1783 սկսան բնակիլ ի սմա եւ յազգէս հայոց»:

Պուլաւ. «Սակաւ ոմանք յազգէս հայոց»:

Քիշնիւ. «Սակաւ ոմանք յազգէս հայոց»:

Զերմուլից. «Ժամանակաւ էր մեծ, յորում էին տունք առաւել քան զհազար, կէսք ի նոցանէ յազգէս հայոց, որք ունէին եկեղեցիս երկուս»:

Մօյլով. «Սակաւ ոմանք յազգէս հայոց»:

Հօթիմ. «Գտանին ի նմա եւ յազգէս հայոց»:

Պուլտինայի չրջանային քովիսէր Շթօր 1788 Յունիս 16-ին Սուչովայի չրջանին մէջ կը հաշուէ 141 հայ ընտանիք, բաղկացած 724 հոգիէ, որոնցմէ 363-ը այր եւ 361-ը կին:

Հ. Ղուկաս Ինճիճեան, միեւնոյն հատորին մէջ, եւրոպական թուրքիոյ Օլու կամ Օքսաքով նահանգին մէջ ալ նկատի կ'առնէ մեծ մասամբ արդի Տօպրուճան (էջ 107-127) եւ այլ առթիւ հայոց մասին ալ տեղեկութիւններ կուտայ.—

Խաֆչա. «Յազգէս հայոց սակաւք մնային յետ պատերազմին որ ի ժամանակս Գ. Սուլթան Մուստաֆայի»:

Պրայլա. «Սակաւք ոմանք յազգէս հայոց»:

Խաֆչիլ. «Յազգէս հայոց տունք իրբ 300»:

Զօպլանիւ. «Յառաջագոյն էին իրբ 100 տունք յազգէս հայոց. այլ յետ պատերազմին որ ի ժամանակս Գ. Սուլթան Մուստաֆայի ցանեալ ցրուեցան»:

Գօնակեօլ. «Էին յազգէս հայոց նախ քան պատերազմն»:

Մուսաիպ Գշլա. «Էին յազգէս հայոց նախ քան պատերազմն»:

Գաւլշան. «Յազգէս հայոց են բազումք»:

Քիլէ. «Յազգէս հայոց բազումք»:

Ագֆերման. «Գտանին ի բնակիչս եւ յազգէս հայոց»:

Ստեփաննոս Գիւլէր Ագոնց արքեպիսկոպոս, արքահայր Վենետիկեան Մխիթարեանց, ինչպէս յիշեցինք, հեղինակն է «Աշխարհադրութիւն Զորից Մասանց Աշխարհի» երկերու շարքին: Եւրոպան նկարագրող Գ. հատորին մէջ (Վենետիկ, 1802), կը խօսի նաեւ Դրանսիլվանիոյ մասին (էջ 320-334): Հոն տեղեկութիւններ կուտայ նաեւ Դրանսիլվանիոյ հայութեան մասին, եւ տեղ տեղ կ'ակնարկէ անոնց